

2547



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

« 05 » 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 054 - 25

Նախաձեռնող՝

«Արոսա» ՍՊԸ

Ք. Երևան, Ուլենցու փ., 31/4

Գործունեությունը՝

Ալավերդի համայնքի Արևածագ

բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցում

Լոռու մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 054 - 25

« 05 » Ճարտքի 2025թ.

Լոռու մարզի Ալավերդի համայնքի Արևածագ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Արոսա» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/այսուհետ՝ ՇՄԱԳ/, նախագիծ
Գործունեության կատեգորիա՝ «Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, Արևածագ բնակավայր

Ներածական մաս. «Արոսա» ՍՊԸ -ի կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ Լոռու մարզի Արևածագ բնակավայրում նախատեսվում է իրականացնել միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.69639 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքն իրենից ներկայացնում է հարթ ռելիեֆով, ծառազուրկ հողամաս: Ռելիեֆի մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1233.0-1235.0 մետրի սահմաններում: Միջնակարգ դպրոցը կառուցվելու է գոյություն ունեցող, ապամոնտաժման ենթակա դպրոցի հողամասի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը մինչև 15 մետր խորությամբ չեն բացահայտվել:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատամամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները:



- Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝
- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 16 963.9 մ²,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 2776.6 մ²,
- կանաչապատման ընդհանուր մակերեսը՝ 10400մ²,
- բարեկարգման ընդհանուր մակերեսը՝ 3787.3 մ²,
- կաթսայատան մակերեսը՝ 35.6 մ²:

Համաձայն նախագծի՝ միջնակարգ դպրոցն իրենից ներկայացնում է չորս իրար կապվող մասնաշենքով՝ 288 աշակերտի համար նախատեսված եռահարկ շենք: Դպրոցն ունի 12 դասարան և 8 մասնագիտացված կաբինետներ, նախատեսված է 1-ինից մինչև 12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով:

Առաջին հարկում տեղակայված են 1-ին, 2-րդ և 5-րդ դասարանների դասասենյակները, ներառական կրթության սենյակը, տարրական դպրոցի մարզասրահ-խաղասենյակը, կենսաբանության և քիմիայի կաբինետները՝ իրենց լաբորատորիաներով, ճաշասրահը, հանդիսությունների դահլիճը՝ հանդերձարաններով, տնօրենի աշխատասենյակը և քարտուղարությունը, բժշկի սենյակը, տարրական, միջին և ավագ դպրոցի տղաների, աղջիկների և հաշմանդամների համար նախատեսված սանհանգույցները և այլն:

Երկրորդ հարկում տեղակայված են 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների դասասենյակները, տարրական դպրոցի ուսուցչանոցը, շախմատի դասասենյակը, երկարօրյա խմբի սենյակը, ֆիզիկայի կաբինետը՝ իր լաբորատորիայով, միջին և ավագ դպրոցի ուսուցչանոցը, ռազմագիտության կաբինետը, զենքի պահոցը, ռոբոտաշինության կաբինետը, տնարարության կաբինետը, համակարգչային կաբինետը, սանհանգույցները և այլն:

Երրորդ հարկում տեղակայված են 8-12-րդ դասարանների դասասենյակները, օտար լեզուների կաբինետը, գծագրության և կերպարվեստի կաբինետը, գրադարանի ընթերցասրահը, գրապահոցը, անհատական պարապմունքների սենյակները, սանհանգույցները և այլն: Տանիքը լինելու է պողպատե ծածկով, հարթ, կազմակերպված ջրահեռացմամբ: Նկուղային հարկի նախագծային լուծումները տիպարային նախագծի անփոփոխ լուծումներն են, որտեղ բացի նկուղային սրահ-տարածքից տեղակայված են սանհանգույց և օժանդակ սենյակներ: Նկուղային հարկը կարող է ծառայել որպես ժամանակավոր թաքսոց:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ միջնակարգ դպրոցն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Միջնակարգ դպրոցի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Նախագծով նախատեսվում է համալիրի տանիքին տեղադրել 119.88 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 216 հատ 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:



Դպրոցի ջեռուցման նպատակով նախատեսվում է կառուցել կաթսայատուն, որտեղից ջերմամատակարարումն իրականացվելու է գազի ավտոմատացված այրիչներով 465/423կվտ հզորությամբ 2 կաթսայի միջոցով: Կաթսայատան ծխահերացման պողպատյա խողովակը ունի 400 մմ տրամագիծ, 8 մ բարձրություն: Գազի ծախսը կաթսայատան համար կլինի՝ $B=Q/QH \times 800000/8250 \times 0.93=104.3$ մ³/ժամ: Ջերմության ընդհանուր հաշվարկային ծախսը կազմում է՝ $Q_{\text{ընդ.}}=422564.0$ կկալ/ժ: Ջերմատարը՝ ջուր է $T_2=80^\circ - 60^\circ$ C: Կաթսայատան հեռավորությունը դպրոցից 4,0 մ է: Ջեռուցման ցանցի նախագիծը կատարվել է համաձայն 2.04.07-86 շինարարական նորմերի և կանոնների:

Քանի որ նոր դպրոցը կառուցվելու է գործող դպրոցի տարածքում, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման գծերը, նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկոունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ջրօգտագործումն ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (127 մարդ), կկազմի 1574 մ³/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 811,8 մ³/շին.ժամ: Ջրցանի և անիվների լվացման համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2385,8 մ³/շին.ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կատարվելու է հողային զանգվածի հանույթ, որից մի մասը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած հողային զանգվածը և շինարարական աղբը կհեռացվի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ավալերդու համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են աղբարկղեր: Կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական հրապարակի սահմաններից դուրս կեղտաջրերի թափանցումը կանխարգելվելու և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և բետոնաջրերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ փոքր քանակներով տիղմն, ինչն իրենից ներկայացնում է հողի, ավազի և այլ մնացորդային նստվածք, մնացած շինաղբի հետ կտեղափոխվի աղբավայր: Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզոնարանից, որտեղ կուղղորդվեն նաև անիվների լվացման



ջրերը: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային կեղտաջրերը ներքին ցանցի միջոցով հեռացվելու են դեպի ՏՈՊԱՍ - 150 կեղտաջրերի մաքրման կայան: Մաքրելուց և վարակազերծելուց հետո կուտակվելու են ոռոգման համակարգի V=27խ.մ կուտակիչ հորի մեջ, ավելացված հոսքերը հեռացվելու են գործող համայնքային կոյուղու ցանցի միջոցով: Շահագործման ընթացքում ստուգումների նպատակով նախատեսված են դիտահորեր :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն համաձայն Ալավերդու համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի: Նախատեսվում է տնկել 42 ծառ (բարդի, հացենի, կաղնի, եղևնի) և թփուտներ 36 հատ (սամշիտ, ծորենի): Անհրաժեշտ քանակի բուսահող ձեռք կբերվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շահագործման ընթացքում իրականացվելու են հին դպրոցի քանդման աշխատանքներ մեխանիկական եղանակով: Սկզբում կիրականացվեն դպրոցի շենքի տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամոնտաժումը, այնուհետև՝ կտրող գործիքների օգնությամբ մասնաշենքերի կոնստրուկտիվ կարերի և պատերի քարերի ապամոնտաժման գործողությունները, ինչպես նաև ջրթող խողովակների և ձևավոր մասերի հեռացման աշխատանքները: Անվատանգության նկատառումներից ելնելով՝ ապամոնտաժման ընթացքում կկիրառվեն պաշտպանիչ ցանցեր: քանդման աշխատանքներից գոյացած շինադրը կհեռացվի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ալավերդու համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի չափումներ՝ ըստ անհրաժեշտության,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ պարբերաբար,
- փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար,
- մեքենաների ապահովվում խլացուցիչներով, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ըստ անհրաժեշտության,
- շինարարական և կենցաղային աղբի կանոնավոր տեղափոխում հատուկ հատկացված վայրեր՝ սահմանված երթուղիով,
- առկա ծառերի տեղափոխում, վերատնկում ,
- նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:

Պատճառաբանական եզրահանգումներ. Լոռու մարզի Արևածագ բնակավայրում կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Շահագործման ընթացքում նորատունկ բուսականության խնամքը կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի



մշտադիտարկումները, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Լոռու մարզպետարանը, Ալավերդի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը: Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Լոռու մարզի Արևածագ բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը: Անհրաժեշտ է իրականացնել կենսաբազմազանության պահպանմանն ուղղված մշտադիտարկումներ:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Արոսա» ՍՊԸ - ի կողմից ներկայացված Լոռու մարզի Ալավերդի համայնքի Արևածագ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան